ԼՃԱՇԵՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԷՏԱՊՆԵՐԸ

Հ. Հ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Հայաստանի տերիտորիան, ինչպես հայտնի է, ծածկված է նյութական-մշակույթի բոլոր ժամանակները ներառնող հուշարձանների խիտ ցանցով։ Հուշարձանների խտության և դրանց տարատեսակների հարցում Սևանի ավազանը առավել ուշագրավ և հետաքրքիր շրջան է։ Նախնադարյան համայնքի տնտեսության, կենցաղի, կուլտուրայի պատմության հետ կապված հարցերի մեկնաբանման, ճշգրտման գործում վճռական նշանակություն ունի տվյալ հուշարձաններից հայտնաբերված նյութերի զարգացման հաջորդականության որոշումը։ Այդ տեսակետից բացառիկ կարևորություն ներկայացնող նյութեր են կուտակվել Լճաշենի պեղումներից։

Լճաշենի նյութական մշակույթն ընդգրկում է երկարատև մի ժամանակաշրջան, այն սկսվում է III հազարամյակի կեսերից և հասնում է մինչև VII դարը (մ. թ. ա.)։ Նշված ժամանակաշրջանին վերաբերող հազարավոր իրերի խմբում պարզորոշ նկատվում են մշակույթի՝ մեկը մյուսին հաջորդած շրջանները։ Այդ նյութերի մի մասը հայտնաբերված է կիկլոպյան ամրոցից, իսկ մյուս մասը՝ դամբարանների պեղումներից, որոնք ժամանակակից են։ Ամրոցի ներքին (վերևից չորրորդ) շերտերում, 2,5 մ խորության վրա (8 գ սենյակ), հայտնաբերվեց կիսագնդաձև կանթերով, փայլը կորցրած էնեոլիթյան խեցեղեն։ Խեցեղենի հետ միաժամանակ հայտնաբերվեցին աղորիքներ, ոսկրե գործիքներ, իլիկի գլուխներ։ Շերտագրված այս նյութերը մեծ նմանություն ունեն Շենգավիթի վերին շերտերից, ինչպես և Էլարի, Բառնիի, Քաղսիի, Դիրաքլուրի (Կարնուտ) պեղումներից հայտնաբերվածների հետ։ Բացի բնակատեղիի շերտագրված նյութերից, գտնվել են նաև էնեոլիթյան կուլտուրային պատկանող դամբարանային նյութեր (120-րդ դամբարան)։ Այստեղից հետևում է, որ Լճաշենի վաղ շրջանի նյութերի ժամանակագրման հիմքը հանդիսացել են կիկլոպյան ամրոցի ներքին շերտերից և դամբանաբլուրներից գտնված իրերի կոմպլեքսները։ Ավելին, մեր նյութերը համեմատվում են արդեն ժամանակագրված և ընդհանուր ճանաչում գտած հուշարձանների նյութերի հետ։ Հնարավոր է, որ Լճաշենի վաղ շրջանի նյութերը պատկանել են էնեոլիթի վերջին շրջանին, մանավանդ, եթե հաշվի առնենք, որ Լճաշենի խեցեղենի վրա նկատվում է էնեոլիթյան շրջանին հատուկ ուժեղ սև փայլի անկում, լայն, տափակ և սուր՝ ներճկված հատակների, ինչպես և էնեոլիթին բնորոշ երկրաչափական զարդամոտիվների անհետացում։

Ստորև ներկայացնում ենք մեր պեղած էնեոլիթյան երկու մեծ դամբանաբլուրների և նրանցից գտնված նյութերի համառոտ նկարագրությունը։

1952 թ. Հրազդանի շրջանի Ջրառատ գյուղի մոտ մեր պեղած դամբանաբլուրը չուներ դամբանափոս, թաղումը կատարված էր գետնի երեսին պատրաստած սալահատակի վրա։ Դամբարանն ուներ թաղման շրջանաձև հրապա-

րակ, որի եզրերին շարված էին մեծ քարեր, կանգնած վիճակում, բայց վերևի ծայրերով խոնարհված դեպի ներս։ Այստեղ բացվեց ինը չափահաս մարդու և մեկ երեխայի կմախք։ Հայտնաբերվեցին կիսագնդաձև կանթերով, սև փայլը կորցրած մեծ թվով կավամանների բեկորներ, ամբողջական փոքր բաժակներ, կճուճներ և իլիկների ոսկրե գլուխներ, օրսիդիանի ցլեպներ, նետասլաք, «ծիծեռնակաթև» աղորիքի բեկորներ, քարե մուրճեր և այլ իրեր։

Նույնատիպ թաղում ունեցող դամբարան բացվել է նաև Լճաշենում (120-րդ)։ Այստեղ նույնպես չկար դամբարանափոս, թաղումը կատարված էր գետնի երեսին, իսկ թաղման շրջանաձև հրապարակը ծածկված էր սպիտակ հողով և նույն գույնի մանր քարերով։ Պատրաստված էր դեպի հրապարակ տանող շուրջ երեք մետր երկարությամբ միջանցքաձև հատուկ մուտք, որի մեջ բացվեց չորս, իսկ հրապարակում՝ ինը մարդու կմախք, մեծ մասը պպզած դիրքով։ Նույնատիպ մուտք ունեցող մեծ դամբարան Թոփքարում բացել է նաև Բ. Ա. Կուֆտինը[1]։

Լճաշենի 120-րդ դամբարանում հայտնաբերվեցին շուրջ 200 մեծ ու փոքր կավամանների բեկորներ, որոնցից մի քանիսի վրա կան կիսագնդաձև նուրբ կանթեր և ժապավենաձև վերադիր զարդեր։ Այդպիսի կանթեր և զարդամոտիվ կա նաև Քաղսիի 1900/25, 38, 40 և Դիրաքլարի (Կարնուտ) 1478/1 համարները կրող խեցեղենի վրա, որոնք պահվում են Պատմական թանգարանում և պատկանում են միևնույն ժամանակին։ 120-րդ դամբարանում գտնված խեցեղենի խմբում կան իոքր բաժակներ՝ նուրբ կանթերով, վերին մասերը լայն, ներքինը՝ նեղ փոքր անկանթ կճուճներ։ Որոշ բեկորների վրա պահպանված են կիսագնդաձև կանթերը, բայց սև ուժեղ փայլը բացակայում է, զարդապատկերներ առհասարակ չկան։ Այս դամբարանում առավել աչքի ընկնող իրերն են՝ պղնձե կիսապարուր տեսքով ապարանջաններ, երկու նույնատիպ մատանի ու բնական տափակ գետաքարից կախիչ զարդը (աղ. I, 1—2)։

Լճաշենի կիկլոպյան ամրոցի ներքին շերտերից ու դամբարաններից հայտնաբերված նյութերը լիովին համընկնում են էնեոլիթի վերջին շրջանին պատկանող հուշարձանների նյութերի հետ, իսկ այդ շրջանը Հայաստանի պայմաններում հնարավոր է վերագրել երրորդ հազարամյակի երրորդ քառորդին (մ. թ. ա.)։

Լճաշենի 120-րդ դամբարանում էնեոլիթյան շրջանում կատարված թաղումից որոշ ժամանակ անց, նույն դամբարանի վրա կրկին անգամ կատարվել է թաղում, որի հետևանքով դամբարան է դրվել նոր որակի խեցեղեն, որն իր գույներով, ձևերով, զարդարանքի ոճով բնավ չի համատեղվում էնեոլիթյան մշակույթին պատկանող նյութերի հետ։ Սրանք անցման շրջանի փոքր ծավալ ունեցող անունկ կավամաններ են՝ գեղեցիկ տեսքով, խորաքանդակ հիանալի պատկերներով, որոնք հաճախ զուգակցվում են ծակոտկեն կետաշարերի հետ, շագանակագույն ու սև գույներով (աղ. II, 2—3)։

Այսպիսով, այս ամենը նշանակում է, որ էնեոլիթյան մշակույթի վերջին փուլում բացառված չէր մի նոր մշակույթի սաղմնավորումը։ Թերևս սա էական է, մանավանդ, եթե հաշվի առնենք այն կարևոր փաստը, որ էնեոլիթի վերջում Հայաստանում կան նախորդի համեմատությամբ ավելի նվազ զարգացած և

[1] Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, Тбилиси, 1941, 83, погр. 36, Тбл. 90 а, 90 б.

կարճատև ժամանակաշրջան ներառնող նոր մշակույթի հուշարձաններ։ Փաստացի նյութից երևում է, որ նախորդ մշակույթի վերջում հանդես է գալիս նոր մշակույթ, որն իրականում հանդիսացավ էնեոլիթում սկիզբ առնող և էնեոլիթը վաղ բրոնզի հետ կապող օղակը։ Այլ կերպ ասած, էնեոլիթյան մշակույթը փոխարինվում էր ինքնատիպ նոր մշակույթով ու թեև վերջինս օրգանապես անջատված չէր նախորդից, բայց և այնպես նրա կրկնությունը չէր, այլ կուլտուրայի ու տնտեսության զարգացման նոր աստիճանում նրա օրինական հաջորդը։

Հենց այդ կարճատև նոր շրջանն էլ մենք համարում ենք էնեոլիթը բրոնզին կապող շղթայի հիմնական օղակը կամ այն կամուրջը, որը նշանավորեց երկու մեծ դարաշրջանների միջև ընկած անցումը և դրանք անբաժանելիորեն իրար կապեց։

* * *

Վերը բերված փաստարկները, իհարկե, դեռևս չեն նշանակում, որ նոր մշակույթը զերծ է իր նախորդի (որի ընդերքում ինքը կազմավորվում էր) ազդեցությունից, կամ սրանց միջև եղած օրգանական կապերը բացառված են։ Ընդհակառակը, հատկապես սկզբնական շրջանում նկատվում են ազդեցության որոշ նշաններ, որոնք անհետանում են ավելի ուշ։ Ազդեցության և երկու մշակույթների միջև եղած կապի լավագույն օրինակը վերջին տարիներում Էլարիում հայտնաբերված խեցեղենն է։ Էլարի վերջին նյութերին հաջորդում են Էջմիածնի շրջանի Արագած գյուղում հայտնաբերված փայլուն նյութերը, որոնց վրա եղած կանթերը նրբացած են, փոքրացած, կավամանների ձևերը փոփոխված, նրանց վրա եղած զարդերը թեև փոքր չափով հիշեցնում են էնեոլիթյան զարդամոտիվները, բայց բնավ նրանց կրկնությունը չեն (աղ. II, 4—5)։ Ինչպես երևում է, Արագածի խեցեղենի խմբին հաջորդում են Ջարջարիսից և Թահրովի անվան սովխոզից հայտնաբերված նյութերը։

Այս հուշարձաններին պատկանող խեցեղենի բնորոշ առանձնահատկությունը երևում է մի քանի որոշակի հատկանիշներով. օրինակ՝ նրանց վրա չկան էնեոլիթյան շրջանին հատուկ զարդապատկերները, մեծ մասամբ բացակայում է սև ուժեղ փայլը, չկան նաև կիսագնդաձև կանթերը, սուր հատակները, նկատելիորեն փոփոխված են նաև կավամանների ձևերը, մինչև այժմ չեն հանդիպել լայնաբերան մեծ կարասներ, որոնք մեծ տարածում են ունեցել էնեոլիթի վերջին շրջանում։ Անցման շրջանում հանդես են գալիս ուռուցիկ իրաններով, բայց ծավալով փոքր մեկ կանթանի գավաթներ, որոնց գույները սև են, գրեթե անփայլ, պատերը՝ նուրբ, հավասար հաստությամբ, շուրթերը՝ բարակ, հատակները՝ կլոր և քիչ ուռուցիկ, կավը՝ գերազանց մաքուր, թրծումը՝ բավարար։ Նշված գավաթներն ունեն ուղիղ և բարձր օձիք, որպիսին էնեոլիթյան դարաշրջանի խեցեղենի վրա գրեթե չի հանդիպում։ Այս խմբին պատկանող խեցեղենի վրա նախկին դարաշրջանի զարդամոտիվները չեն երևում, այլ հանդես են գալիս զուգահեռ բարակ գծերից կազմած արմունկաձև զարդագոտիներ, սակայն միշտ չէ, որ զուգահեռ գծերը միացված են իրար շտրիխներով։ Գավաթների հետ հանդիպում են հաստ պատերով սև գույնի անփայլ քրեղաններ, որոնց շուրթերը թեքված են դեպի ներս։ Սրանց կավը ավազախառն է, թրծումը՝ թույլ։ Խեցեղենի այս խմբում կան նաև ծավալով ավելի փոքր թասեր, որոնք պատրաստված են բարձրորակ կավից։ Սրանց պատերը նույնպես հաստ են, բայց լավ հղկած, շուրթերը մի փոքր թեքված են դեպի ներս, կամ ուղիղ

են և պատերից բարակ (պատմական թանգարան, գույքամատյան 115/18, 201, 219 և Զոլաքար. տես աղ. II, 6—11)։

Էնեոլիթից բրոնզին անցման առաջին շրջանի նյութեր պարունակող դամբարաններից մեկը պեղվել է Ապարանի շրջանի Ջարջարիս գյուղում 1952 թ.։ Դամբարանը կողքերից և ճակատներից ուներ շորսական շար քարե պատեր և քարե ծածկ, ուղղված էր հյուսիսից հարավ։ Նախապես երկու անգամ կողոպտված այս դամբարանից գյուղացիները հանել են (ինչպես իրենք էին ասում) ուռուցիկ իրաններով մեկ կանթանի 12 փոքրիկ գավաթներ։ Ստուգողական պեղումների ժամանակ մեզ հաջողվեց գտնել ևս հինգ կավաման, որից երեքը սև գույնի հաստ պատերով քրեղան, իսկ երկուսը՝ ուռուցիկ իրաններով մեկ կանթանի գավաթներ, որից մեկը զարդարուն, մյուսը՝ անզարդ (աղ. II, 6—7)։ Նույնանման գավաթներ կան Ապարանի շրջանի Շիրազլու գյուղում պատահաբար բացված դամբարանի իրերի խմբում (աղ. II, 8) և պատմական թանգարանի ֆոնդերում (766/7, 3, 23)։ Դժբախտաբար սրանց հայտնաբերման հետ կապված մանրամասնություններն անհայտ են։ Այդ ժամանակին պատկանող մեկ այլ հուշարձան պեղել ենք 1952 թ. Երևանից 5 կմ արևմուտք, Թաիրովի անվան սովխոզի տերիտորիայում։ Այս դամբարանում հայտնաբերվեց օբսիդիանից ինքնատիպ նետասլաք, որը նման է Ուրբնիսիում Ա. Ի. Ջավախիշվիլու և Լ. Ի. Գլոնտիի պեղումներից հայտնաբերած նետասլաքներին, որոնք պատկանում են էնեոլիթին[2]։ Նույնանման նետասլաք մենք հայտնաբերել ենք նաև Կիրովականի շրջանի Ֆիոլետովո գյուղի մոտի էնեոլիթյան բնակատեղիում հետազոտական պեղումների ժամանակ՝ եզան կավե արձանիկի հետ միասին։ Նույնատիպ արձանիկներ հայտնաբերված են Շենգավիթում, Մոխրաբլուրում։

Սովխոզի մոտի դամբարանից հայտնաբերված կավամանները ինչպես արտաքին տեսքով, գույներով, կավի որակով, այնպես էլ զարդամոտիվով նման են Ջարջարիսից գտնված նյութերին։ Այստեղ ևս գտնվեցին նուրբ պատերով, ուղիղ և բարձր օձիքով ուռուցիկ իրաններով մեկ կանթանի գավաթներ, մեկ քրեղան, որի իրանը զարդարված է արմունկաձև զուգահեռ գծերով, իսկ վերջիններս միացված են իրար նուրբ շտրիխներով։ Կավը մաքուր է, թրծումը՝ լավ, գույնը՝ սև, անփայլ (աղ. II, 11)։

Դեռևս 1931 թ. Հայաստանի հուշարձանների պահպանության կոմիտեի արշավախումբը Լենինականի մսի կոմբինատի շինարարության ժամանակ նրա շրջակայքում պեղեց մի քանի դամբարաններ։ Այստեղ պեղած II և III դամբարաններից հայտնաբերված կավամանները լիովին համընկնում են էնեոլիթը բրոնզին կապող օղակի նյութերի հետ՝ կավի որակով, ձևերով և զարդամոտիվներով։ Խեցեղենի այս խմբից առավել բնորոշ է ուռուցիկ իրանով, սև գույնի, արմունկաձև մեկ կանթով գավաթը, որն ունի Ջարջարիսի գավաթների նման ուղիղ օձիք (աղ. II, 9)։

Վերևում նկարագրած խեցեղենի վերաբերյալ համեմատական նյութեր մեզ չհաջողվեց գտնել ոչ Վրաստանի և ոչ էլ Ադրբեջանի պատմական թանգարանների ֆոնդերում, բայց կասկածից վեր է, որ այդպիսի նյութեր կգտնվեն։ Մեր ներկայացրած նյութերը Հայաստանի պայմաններում ավելի մեծ տարածում են գտել նախալեռնային և լեռնային շրջաններում։

[2] А. И. Джавахишвили, Л. И. Глонти, Урбниси, 1, Тбилиси, 1962, էջ 60, նկ. 196, сл. B_2.

Մեր ներկայացրած փաստացի նյութի հիման վրա հուշարձանների նշված խումբը, որը իրականում հանդիսացավ էնեոլիթյան մշակույթը բրոնզի վաղագույն շրջանին կապող շղթայի օղակը, թվագրում ենք XXIII—XXI դարերով (մ. թ. ա.)։ Այդ ժամանակաշրջանը Ա. Ա. Իսսենը համարում է վաղ բրոնզի շրջան[3], իսկ մենք, մեր նյութերի հիման վրա, անցման կամ էնեոլիթը վաղ բրոնզին կապող շրջան։

Վաղ բրոնզի սկզբնական շրջանին հաջորդած Լճաշենի մշակույթում իսպառ բացառված են նախորդ շրջանի արտադրանքի ոչ միայն տարրերը, այլ էությունը։ Բրոնզի վաղագույն շրջանին պատկանող այս հուշարձաններից հայտնաբերված խեցեղենի վրա լիովին բացակայում են կանթերը, սև կավը մեծ մասամբ փոխարինվել է շագանակագույն կավով, փոփոխված են նաև կավամանների ձևերն ու նրանց վրա եղած զարդամոտիվները։ Լճաշենի մշակույթի այս խումբը իր բոլոր հատկանիշներով անհարիր է նախորդի հետ և իր էությամբ ինքնատիպ է ու անկախ։ Այս փաստն անհնար է կտրել այն հասարակությունից, որին պատկանել են արտադրանքի այս նոր նմուշները։ Ինչպես երևում է, III հազարամյակի վերջին քառորդում Հայաստանի տեղաբնիկների կազմում (այդ թվում նաև Լճաշենում), տնտեսության մեջ, թերևս նաև կուլտուրայի բնագավառում տեղի են ունեցել արմատական փոփոխություններ, որոնց հետևանքով առաջացել են նյութական մշակույթի նոր որակի արտադրանքի բազմազան կոմպլեքսներ։ Եթե Հայաստանի պայմաններում բրոնզի առաջացման առաջին շրջանում խիստ սակավ են հանդիպում մետաղե իրեր, ապա նրա հաջորդ շրջանում մետաղն ավելի հաճախ է հանդիպում, և, որ կարևորն է, դրանք նոր տեսակի իրեր են։ Այս հանգամանքը հարկադրում է մտածել, որ վերջինս կապված է բրոնզի աստիճանական տարածման, նրա զարգացման հետ։

Խնդիրն այն է, որ մետաղե իրերը հանդիպում են գերազանցապես դամբարաններում. շերտագրված և նույն շրջանին պատկանող բնակավայրերում առայժմ մետաղե իրեր գրեթե չեն հանդիպել։

Այս հարցում ևս ելակետը Լճաշենի նյութերն են։ Կիկլոպյան ամրոցի 8գ կացարանում, էնեոլիթյան շերտից վերև, բրոնզի մշակույթին պատկանող շերտի ներքին խավում (երկու մետր խորության վրա) հայտնաբերվեցին խեցեղենի շեկ գույնի խորաքանդակ բազմաթիվ բեկորներ (աղ. II, 12—16), որոնց զարդամոտիվները բավականաչափ մոտ են 123-րդ դամբարանից հայտնաբերած խեցեղենին և նրա վրա եղած զարդապատկերներին։ Էնեոլիթյան շերտերից վերև բրոնզի սկզբնական շրջանին պատկանող նյութեր հայտնաբերված են նաև Բ. Ա. Կուֆտինի պեղումների ժամանակ՝ Բեչտաշենի կիկլոպյան ամրոցում[4] և Ուզերլիկ-թեփեում, Կ. Խ. Քուշնարյովայի պեղումներով՝ բրոնզի դարին պատկանող ամրոցի ավերակներից[5]։

Մի կողմ թողնելով այս խմբին պատկանող բոլոր դամբարանների մանրամասն նկարագրությունը, ցույց տանք միայն 123-րդ դամբարանում կատարած թաղման ձևը։ Դամբարանը շրջանաձև է, չունի քարե պատեր, խորությու-

[3] А. А. Иессен, Кавказ и Древний Восток в IV и III тысячелетиях до нашей эры, Краткие сообщения, ИИМК, 93, Москва, 1963, էջ 3—14։

[4] Б. А. Куфтин, Նշվ. աշխ., 101, Тб. CXXV.

[5] К. Х. Кушнарева, Поселение эпохи бронзы на холме Узерлик-тепе, около Агдама, „Материалы и исследования по археологии СССР", № 67, էջ 406—407։

ներ 3, տրամագիծը 2,5 մետր է։ Այստեղ բացվեց մեկ եզան ամբողջական կմախք, ձախ կողքի պառկած, ոտքերը մեկնած, բայց առանց գանգի։ Եզան կմախքի միջից գտնվեց արտակարգ մեծության օբսիդիանե նետասլաք (աղ. I, 12), նրա մեկնված ոտքերի և մարդու կմախքի արանքում՝ տափակ շեղբով մեկ բրոնզե դաշույնի կես մասը, որի ծայրին կա տափակ հավելված (պոչ)՝ դաստակի մեջ մտցնելու համար (աղ. I, 13)։ Հյուսիս-արևելյան կողմում բացվեց մեկ այծի և երկու ոչխարի ամբողջական կմախք։ Արտակարգ անսովոր էր ննջեցյալի թաղման ձևը։ Մարդու կմախքը խնամքով բացելուց հետո պարզվեց, որ ննջեցյալը թաղվել է մասերի բաժանված։ Նրա գլուխն անջատված է եղել իրանից, ոտքերն ու թևերը նույնպես կտրել են և յուրաքանչյուրը երկու մասի բաժանել։ Իրանը դրել են ներքև, ութ մասի բաժանած ոտքերն ու թևերը կողք-կողքի՝ մեծ խնամքով շարել են իրանի վրա, իսկ գլուխը դրել բոլորից վերև, ձախ այտի վրա, դեմքով դեպի հարավ։

Թաղման այս ձևն առաջին անգամ է հանդիպում Հայաստանում և արտակարգ ուշագրավ է։ Մեզ հայտնի է, որ նախնադարում կամ նույն կենցաղով ապրած ժամանակակից ժողովուրդների մոտ գոյություն ունեցող թաղման տասնյակ ձևերից մեկն էլ մասերի բաժանված թաղումն է։ Մասերի բաժանված թաղումներ հանդիպել են Հնդկաստանի հյուսիսում (Խարապպեյում)[6]։ Եղել են և հուշարձաններ, որտեղ միաժամանակ հանդիպել են միևնույն ժամանակին պատկանող դիաթաղում ու մասերի բաժանված թաղում (Նալեյում)[7]։ Հին եգիպտացիներն իրենց ննջեցյալներին գլխատում էին, հանում սիրտը և ուղեղը, հաճախ վերցնում էին նրա ոսկրերից մի քանիսը և տեղն ուրիշները դնում[8]։ Այս կարգի օրինակներ շատ կան, բայց այսքանն էլ բավական է։ Սա կապված էր թաղման սովորույթների և առանձին ցեղերի մոտ հանդերձյալ կյանքի մասին ունեցած ուրույն հասկացողությունների հետ։

Կրկին անդրադառնալով Լճաշենի նշված դամբարանին, հարկ է նշել նաև այստեղ բացված խեցեղենի բարձր որակը, գույները, ձևերը, նախշազարդերը։ Դամբարանում բացված 13 կավամանները բոլոր հատկանիշներով լիովին համապատասխանում են Լճաշենի կիկլոպյան ամրոցի 8 գ կացարանի ցածից երկրորդ շերտի ներքին[9] խավից գտնված խեցեղենին։ Դամբարանում հայտնաբերված կավամանները մեծ մասամբ գնդաձև և ուռուցիկ իրաններով զարդարուն և անզարդ կճուճներ են։ Ոչ մեկի վրա կանթ չկա։ Նրանք ունեն շիկավուն, շագանակագույն և բաց սև գույներ։ Զարդամոտիվները երկրաչափական են, խորաքանդակ, տեղ-տեղ կետազարդ (աղ. II, 17—19), սրանցից ամենամեծի վրա, № 19), կավամանի իրանի վերին մասում, այն տարբեր ձևեր է ընդունում։ Այս նույն մեծ, ուռուցիկ իրանով կճուճի վրա հինգ տեղով անցնում են անկանոն շրջաններ, որոնց եզրերը ծածկված են խիտ ճառագայթներով, որոշ դեպքերում՝ գալարվող պատկերներ, մեկուսացված թույլ նշմարվող արմունկաձև զարդեր (աղ. II, 19 և 19 ա)։ Գնդաձև սև գույնի կճուճներից մեկն իր վրա ունի կիսակամար վերադիր զարդ։

Օշականում 1963 թ. մեր պեղած 9-րդ դամբարանից հայտնաբերված կավամանները իրենց ձևերով, զարդամոտիվներով, գույներով և կավի բաղա-

[6] С. К. Дикшит, Введение в археологию, Москва, 1960, էջ 383։
[7] Նույն տեղում, էջ 383։
[8] Ց ու. Լիպս, Իրերի ծագումը, Երևան, 1957, էջ 456։

դրությամբ ամբողջովին համապատասխանում են Լճաշենի 123-րդ դամբարանից գտնված կավամաններին (աղ. III, 2)։ Նույնատիպ խեցեղեն 1952 թ. հայտնաբերել ենք նաև Հայրավանքում։

Նշված 9-րդ դամբարանից գտնված է երկթեք շեղբով բրոնզե դաշույն, որի նմանը հանդիպում է բրոնզի վաղ շրջանի դաշույնների խմբում։

Նյութերի ներկայացրած խումբը Հայաստանում ավելի ընդարձակ տարածում ունի, քան առաջին խումբը (օրինակ՝ Սևանի ավազանում, Հրազդանում, Դիլիջանում, Կիրովականում, Լենինականում, Լոռու ձորում, Էջմիածնում, Էլարում և այլ վայրերում)։

Պետք է ընդունել և այն, որ այս ժամանակաշրջանին վերաբերող հուշարձանները դեռևս անբավարար են ուսումնասիրված, թեև այդպիսիք փոքր թիվ չեն կազմում Հայաստանում։

Ներկայացրած փաստական նյութը հիմք ընդունելով և Լճաշենի կիկլոպյան ամրոցից հստակ շերտագրված խեցեղենի ու դամբարանային միատեսակ ամբողջ կոմպլեքսների սինթեզումը նկատի առնելով, մենք այն ժամանակագրում ենք բրոնզի զարգացման առաջին շրջանով, այն է՝ XXI—XIX դդ. (մ. թ. ա.)։

Վերին աստիճանի ուշագրավ է Լճաշենի խորաքանդակ խեցեղենի մշակույթի զարգացման կեսերից սկիզբ առած և վերջին հաշվով նրան փոխարինած դամբարանային խեցեղենի նոր և ավելի ինքնատիպ տարբերակի հայտնաբերումը։ Դամբարաններից գտնված նյութերի այս նոր խումբը բաժանվում է երեք հիմնական ենթախմբերի։

1. Առաջին ենթախմբի մեջ մտնում են 7, 14, 40 և 44 մեծ դամբանաբլուրները և մի քանի մանր դամբարաններ։ Նշված մեծ դամբարանների արտաքին տեսքը, դամբանափոսերը, ծածկերը, մասամբ նաև թաղման ձևերը միատեսակ են։ Սրանցից երեքը (14, 40 և 44) ուղղված են արևելքից արևմուտք, մեկը (7)՝ հյուսիսից հարավ։ Երկուսի մեջ (7 և 14) մարդու կմախք չի հայտնաբերվել, հավանաբար ննջեցյալները դիակիզվել են։ Մյուս երկուսից յուրաքանչյուրի մեջ գտնվել է հինգ մարդու կմախք, ըստ որում մեկում «դամբարանատերը» դրված էր հատուկ տախտակի վրա (40-րդ), նրա գանգի մոտից գտնվեցին ականջօղեր (պղինձ) և խխունջից զարդեր (աղ. I, 3—5), իսկ մյուսում (44-րդ) դրված էր հողի վրա, դամբարանափոսի կենտրոնում, ձախ կողքին պառկած, ոտքերը և թևերը կծկված վիճակում։ «Ուղեկցողներ»-ի կմախքները բացվեցին դամբարանի հատակից 80 սմ բարձր։ Կավամանները հասարակ են և կոպիտ, իսկ զարդամոտիվներով՝ վաղ։ Նկարագրված դամբարանաբլուրներում Հայաստանի համար թաղման արտասովոր նոր ձև հանդես եկավ։ Սրանց ճակատի անկյուններում դրված էր եզների երկու գանգ՝ դնչերը դեպի վերև։ Գանգերի շրջապատում գտնվեցին եզների ոտքերի վերջավորությունները (դամբարան 14-րդ, աղ. IV, 1)։ 7-րդ և 14-րդ դամբարաններում եզների կողոսկրերից յուրաքանչյուրը բաժանված էր երեք մասի և խումբ-խումբ դասավորված։ Դամբարանների այս ենթախմբից հայտնաբերված խեցեղենը խառն է՝ կան հասարակ խոհանոցային, կարմիր գույնի, անզարդ, իսկ 40-րդում՝ նաև կետազարդ ու անփայլ։ Այս կարգի մեծ դամբարանի և ուղեկցողների նույնաձև թաղումների հանդիպել է նաև Կուֆտինը Թրիալեթիում կատարած իր պեղումների ժամանակ[9]։ Նույն ժամանակաշրջանին պատկանող այս ձևի թաղումներ ունեցող

[9] Б. А. Куфтин, Նշվ. աշխ., էջ 83—84։

մեկ ուրիշ դամբարան բացվել է 1963 թ., Էջմիածնից 5 կմ դեպի հարավ, Մոխրարլուր կոչվող վայրում։ Այս դամբարանում նույնպես եզների դանգերը դրված են եղել արևելյան անկյուններում (ղնչերով դեպի վեր), գտնվել են տերևաձև տափակ շեղբով դաշույն, ուլունքներ, գունազարդ կավամաններ և հասարակ խոհանոցային կավամաններ։

2. Երկրորդ ենթախումբը ներկայացված է Լճաշենի 4-րդ և 135-րդ (2-րդ տեղամաս) մեծ դամբարանաբլուրներով, որոնք ուշագրավ են ոչ միայն թաղման ձևերով, այլև սրանց միջից գտնված իրերով։

4-րդ դամբարանաբլուրը, որի վրա եղած նախկին բուրգը ջրի տակ ավերվել է և գրեթե հավասարվել գետնին, մակերեսի վրա ունի 21 մ տրամագիծ։ Դամբարանափոսը ուղղված է հյուսիսից հարավ, արևմտյան կողքի և հյուսիսային ճակատի 11 շարք ունեցող պատերը պահպանված են։ Նշված կողքի լրիվ կանգուն մնացած պատը բաժանված է երեք հավասար մասերի՝ նրա մեջ ուղղահայաց դրած հատուկ փայտերի միջոցով։ Անհավանական չէ, որ սրանք ժամանակին իրենց վրա կրել են նաև դամբարանի ծածկի քարերի ծանրության որոշ մասը, ծառայելով որպես սյուներ։ Դամբարանի հարավային ճակատի պատին մոտ, հատակից շուրջ մեկ մետր բարձր, իրար խառնված վիճակում բացվեց երեք մարդու կմախք, հավանաբար՝ դարձյալ ուղեկցողներ։ Դամբարանափոսի կենտրոնում բացվեց մեկ մարդու կմախք, աջ կողքին պառկած, ոտքերը և թևերը կծկած։ Մետաղե իրեր և զարդարանքի առարկաներ չեն հայտնաբերվել։ Կավամանները ուշագրավ են իրենց ձևերով ու զարդաքանդակներով։ Սրանք սև փայլով կետազարդ փոքր կճուճներ են, երկու կողմից ներճկված ձվածիր հատակներով երկարավուն քրեղաններ և նախշազարդ ինքնատիպ հրարորրոք բուրանոթներ։

Թաղման ձևով, նյութերի տեսակներով և հնությամբ ուշագրավ և դարձյալ արտակարգ ու անսովոր էր 135-րդ դամբարանը (2-րդ տեղամաս)։ Դամբարանի վրա խառը վիճակում լցված էր միջին մեծության քարերի հսկայական մի կույտ, մեկ մետր բարձրությամբ և 8,5 մետր տրամագծով։ Լիցքի տակ բացվեցին ծածկի 9 մեծ քարեր (0,8—1,0, 35—75, 1—2,15 մ չափսերի)։ Դամբարանափոսի երկարությունն է 5,2, լայնությունը՝ 2,2, խորությունը՝ 2,5 մ։ Կողքերից և ճակատներից ուներ մեծ քարերով շարված երկուական շարք պատեր՝ երկու քարերից առաջացած, պատի բարձրությունը հասնում էր 2,5 մետրի։

Ամենից ուշագրավն այստեղ գտնված Լճաշենի երկանիվ հնագույն սայլն է, որի թափքին աջ կողքի վրա պառկած էր երկարագանգ մարդու մեկ կմախք։ Սայլի անիվներից յուրաքանչյուրը պատրաստված է երեք մեծ և մեկ փոքր կտոր տաշած գերանից, անիվի կենտրոնը, սոնու անցքը երկու կողմից ուռուցիկ է։ Սոնին անշարժ միացվել է թափքի տակ, առեղները երկար անմշակ փայտերից են, սրանց վրա առանց մետաղյա մեխերի ամրացրած տախտակներից առաջացել է թափքը։ Լուծը չկար։ Առեղներից աջ, լծի տեղում բացվեց երկու, իսկ ձախ կողմում՝ ևս երկու մարդու կմախք (աղ. IV, 2)։ Խոշոր եղջերավոր կենդանիների ոսկորներ չեն հայտնաբերված։

Այստեղ գտնված կավամանները պատրաստված են ինքնուրույն ոճով, ունեն սև փայլ, նուրբ և հավասար հարթության պատեր, բարակ շուրթեր, կավը փխրուն է և մաքուր։ Բոլոր կավամանները զարդարված են վերից-վար իջ-

նող կիսակոր, կետաշար գծերով, բոլոր դեպքերում զարդապատկերները ծածկված են սպիտակ ներկով (աղ. III, 4—5)։

Թաղման այս արտակարգ ուշագրավ ձևը հարկադրում է մտածել, որ այս դամբարանում թաղված է եղել դեռևս XIX—XVIII դարերում (մ. թ. ա.) այս տերիտորիայում ապրած ցեղերից մեկի առաջնորդը, որի մահից հետո նրա դին դրել են իր սայլի վրա ու հավանաբար ոչ թե կենդանիներով, այլ չորս ստրուկներով դիակառքը քաշել-բերել են դամբարանի մոտ և սայլն ու կավամանները, ննջեցյալի հետ միասին, դրել են դամբանափոս։ Ամբողջ ողբերգությունը ավարտվել է սայլին «լծված» չորս մարդկանց սպանելու և իրենց տիրոջ հետ միևնույն դամբարանում, բայց անասուններին պատկանող տեղում (առեղներից աջ ու ձախ) թաղելով։ Սրանցից մեկի ճակատի վրա երկու տեղ նկատվում են սուր զենքի հարվածի հետքերը։

Այս բնույթի դամբարան, դարձյալ դիակառքի հետ, պեղել է նաև Երվանդ Լալայանը Ներքին Գետաշեն (Ներքին Ադիաման) գյուղում, բայց վերջինս ժամանակագրվում է XI—X դարերով (մ. թ. ա.)։

3. Դամբարանների երրորդ ուշագրավ և նոր ու հետաքրքիր նյութերով հարուստ խումբը պեղվել է 1959 թ.։ Այս դամբարանների վրա անխախտ պահպանված էր քարերի սկզբնական լիցքը, բացված հովանոցի ձևով։ Սրանց զգալի մասը քարե պատեր չունի։ Դամբարանների ուղղությունները խառն են՝ հյուսիսից-հարավ, հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք։ Նրանք ծավալով համեմատաբար փոքր են (1—2,5, 0,8—1,2, 0,7—2 մ)։ Որպես կանոն, սրանց մեջ բացվում էր մեկ մարդու կմախք՝ աջ կամ ձախ կողքին պառկած, ոտքերը և թևերը կծկած վիճակում։ Զարդարանքի իրերը և մետաղը հազվագյուտ են. գտնված է բրոնզե երկու տերևաձև տափակ դաշույն և մեկ տեգի ծայր (աղ. I, 8—11)։ Միայն մեկ դամբարանից գտնվեց 56 նետասլաք՝ օբսիդիանից և կայծքարից (աղ. I, 14—15), իսկ մյուսում՝ արխաիկ ոճով պատրաստված զարդեր (աղ. I, 6—7)։

Բոլոր դամբարաններում կային 8—20 կավամաններ, որոնք, քիչ բացառությամբ, շարված էին լինում մարդու կմախքի ոտքերի կողմում։ Դամբարաններում բացվում էին 1—3 մանր եղջերավոր անասունների կմախքներ, երբեմն նաև խոշոր եղջերավոր անասունների ոսկորներ։ Երկու դամբարաններում կճուճների մեջ գտնվել են մանր վայրի թռչունների հարյուրավոր ոսկորներ։

Ամենից ուշագրավը կավամաններն են, որոնք գլխավորապես ասեղնազարդ են (աղ. IV, 5), մասամբ նաև կետազարդ։ Կավամանների խմբում, որպես կանոն, կանթը բացառված է։ Բոլոր կավամանները ունեն ուժեղ սև փայլ։ Մի մասը ուռուցիկ իրաններով, ցածր պարանոցներով տարբեր չափսերի կճուճներ են, իսկ մյուս մասը՝ երկու կողմից ներճկված նավակաձև քրեղաններ։ Փոքր թիվ չեն կազմում կոպիտ պատերով մոխրագույն կավամանները, որոնց մի մասը ծածկված է մրաշերտով։ Կավամանների այս խմբում կան նաև հնագույն զարդամոտիվներ կրող ուռուցիկ իրաններով կճուճներ։ Հարկ է նշել և այն, որ սրանց հետ հաճախ հանդիպում են նաև կարմիր գույնի անզարդ և գունազարդ կավամաններ։ Այստեղ չպետք է աչքաթող արվի շատ կարևոր մի նրբություն. այն դամբարաններում, ուր հանդիպում է կարմիր գույնի անզարդ

10 Երվանդ Լալայան, Դամբարանների պեղումները Արևելյան Հայաստանում, Երևան, 1931, էջ 194—199։

խեցեղեն, գունազարդը բացակայում է, իսկ ասեղնազարդը (ավելի մանր և նուրբ կետերով զարդարանքներ) սրանց հետ է հանդիպում։ Այն դամբարաններում, ուր հայտնաբերվում է գունազարդ խեցեղեն, անպայման գտնվում են նաև սև փայլով, բայց ավելի կոպիտ կետերով զարդարուն ուռուցիկ իրաններով (բայց գրեթե միշտ առանց պարանոցների) կճուճներ։ Հենց այս նրբությունները հաշվի առնելով կարծում ենք, որ քննարկվող մշակույթի վաղ շրջանին պետք է վերագրել կարմիր գույնի անզարդ և սև փայլով ասեղնազարդ խեցեղենը, որին հաջորդում են գունազարդ և սև փայլով ավելի կոպիտ կետազարդ խեցեղենի բազմաթիվ օրինակները։

Հարկ է նշել և այն փաստը, որ Լճաշենի գունազարդ խեցեղենի շատ նմուշներ ինչպես իրենց ձևերով, այնպես էլ զարդապատկերների տեսակներով նույնատիպ են Թազագյուղի գունազարդ խեցեղենի հետ[11]։ Գունազարդ մեծ կճուճներից մեկի վրա ներկայացված ալիքավոր գծերի մեջ (ջրի խորհրդանիշ) լողում են բաղանման թռչուններ։ Նույնանման պատկերներով կճուճ գտնված է Գառնիում (ավելի ուշ շրջանի), Կարմիրում (Կամոյի շրջան), Էջմիածնի մոտ՝ Մոխրաբլուրում։ Բազմագույն, բայց ավելի համաչափ զարդերով (կախված կիսապարույրներ, ցանցաձև զարդապատկերներ, ալիքավոր գծեր) և գեղեցիկ ուռուցիկ իրանով մի կճուճ գտնված է Կամո քաղաքում (աղ. III, 10—12)։

Ավելի աչքի է ընկնում Լճաշենի ուժեղ սև փայլով ասեղնազարդ կետազարդ խեցեղենը։ Սրանց վրա եղած զարդամոտիվները ներկայացված են կիսապարույրների, կեռերի, զիգզագավոր, արմունկաձև կամ ուղիղ գծերի, ճառագայթների կամ գալարվող գծերի տեսքով։ Այս բոլոր նախշերը կազմված են կետագծերի խմբավորումների միջոցով, վերին աստիճանի նուրբ են և հավասարակշռված։ Ավելորդ կամ անտեղի ոչ մի կետագիծ կամ նշան չի նկատվում կավամաններից և ոչ մեկի վրա։ Ինչպես երևում է, որակյալ վարպետներ են եղել խեցեղենի հարյուրավոր, երբեմն բարձր արվեստի հասնող այդ նմուշներն արտադրողները։ Ուզերլիկ-թեփեում հայտնաբերած նույնատիպ, բայց ավելի ուշ շրջանի պատկանող խեցեղենը Քուշնարյովան համարում է շքեղության առարկաներ[12]։

Մեր ներկայացրած մշակույթի այս մեծ խումբն իր բոլոր երեք ենթաբաժիններով հանդերձ, որոնք մենք ներկայացրինք իրենց հաջորդական զարգացման հերթականությամբ, ժամանակագրում ենք XX—XVI դդ. (մ. թ. ա.)։

Հուշարձանների վերջին խմբին (կետազարդին) հաջորդում են Սևանի ջրերի տակից բացված և մեր հետազոտած դամբարանների նյութերը։ Այստեղ հայտնաբերված կավամանները ծավալով ավելի փոքր սև կճուճներ են, որոնք զարդարված են կետաշար գծերով, իսկ վերջիններս ներկայացված են արմունկաձև կամ ալիքավոր, կիսապարույր ցանցկեն կամ ճառագայթավոր պատկերներով (աղ. III, 7—9 և 11)։ Նույնատիպ զարդամոտիվներով խեցեղեն մենք գտել ենք նաև Դիլիջանի սանատորիայի ձորում պատահաբար բացված և մեր պեղած դամբարաններից (նյութերը պահվում են Դիլիջան քաղաքի թանգարանում)։

---

[11] К. Х. Кушнарева, Тазакентский могильник в Армении, „Сов. археология", 1960, № 1, էջ 137—147, նկ. 2—3։

[12] К. Х. Кушнарева, Поселение эпохи бронзы на холме Узерлик-тепе, около Агдама, էջ 402։

Ինչպես երևում է ներկայացրած նյութերից, հիմնավորված պիտի համարել մեր ժամանակագրումը նաև Լճաշենի այս մեծաքանակ ու բազմատեսակ նյութերով հարուստ խմբի նկատմամբ՝ ցույց տված ենթախմբերով և հաջորդական զարգացման շրջաններով։

Լճաշենի հնագիտական արշավախմբին հաջողվել է հայտնաբերել խեցեղենի այնպիսի մի խումբ, որը դարձյալ եզակի օրինակ է Անդրկովկասի բրոնզի դարի գանձարանում։ Խեցեղենի այս խմբի առաջին օրինակները հանդես են գալիս նախորդ խմբի վերջին նմուշների հետ միասին և հարատևում են դարեր։

Եթե գունազարդ խեցեղենը Լճաշենի նյութական մշակույթից անհետանում է XVI դարի կեսերից և միայն նրա վերապրուկներն են հասնում մինչև XIII դարը (մ. թ. ա.), ապա Լճաշենի սև փայլով կետազարդ կերամիկան շարունակում է իր գոյությունը մինչև XVII դարի երկրորդ կեսը։ Լճաշենի եռագույն կերամիկան հանդես է գալիս XVI դարի (մ. թ. ա.) սկզբներից և իր զարգացման բուռն վերելքն է ապրում XVI դարի վերջերից ու շարունակում է ապրել ընդհուպ մինչև XIV դարի սկզբները (մ. թ. ա.)։

Գունազարդ կերամիկան Հայաստանի պայմաններում առաջին անգամ հայտնաբերվեց Կարմիր վանքում և այնուհետև Թազագյուղում. դրա նմուշներից մի քանիսը մեծ նմանություն ունեն Լճաշենի գունազարդի հետ։ Բավականաչափ ծավալուն այդ մշակույթը բուռն քննարկման նյութ դարձավ[13]։ Եռագույն կերամիկայի բուն օջախը ցարդ համարվում է Լճաշենը[14]։

Լճաշենի եռագույն կերամիկան, ինչպես ասացինք, եզակի է և մինչև այժմ համեմատական չունի։ Եթե անտեսենք պատահաբար բացված Նոր Բայազետի և Արզնի բուրանոթները։ Խնդիրն այն է, որ կերամիկայի այս խմբում հանդիպում են մեծ թվով կճուճներ, գավաթներ, քրեղաններ, հրաբորբոք-բուրանոթներ, զոհարաններ և նույնիսկ մանր թասեր։ Կավամանների բոլոր այս տեսակներն ունեն ուժեղ սև փայլ և սև ֆոնը զարդարված է սպիտակ ու կարմիր չխամրող ներկերով։ Նախշազարդերը գերազանցապես ներկայացված են մեծ ձգված (աղ. IV, 3) ու փոքր եռանկյունիների, մեանդրների (աղ. IV, 5) և կենդանիների ու երկրաչափական պատկերների միջոցով։ Բոլոր պատկերները արված են կետերով։

Եռագույն կերամիկայի առաջին ենթախումբը ուռուցիկ, գնդաձև ու ձգված իրաններով, առանց պարանոցների ու կանթերի, կլոր, դեպի դուրս լայնացող շուրթերով կճուճներ են։ Այս ենթախմբում կան նաև զգալի թվով ձգված պարանոցներով կճուճներ, որոնք, սակայն, ծավալով ավելի փոքր են։

Երկրորդ ենթախմբում ընդգրկվում են տանձաձև անկանթ տարբեր չափսեր ունեցող գավաթները, որոնց մեծ մասի իրանները ուռուցիկ են, բոլորի պարանոցները բարձր, շուրթերը կլոր և դեպի դուրս լայնացող։ Սրանց չափսերը միատեսակ չեն, մեծերը չորս անգամ ավելի տարողություն ունեն, քան

[13] А. А. Спицин, Некоторые Закавказские могильники. НАК. Б. Б. Пиотровский, Археология Закавказья, Ленинград, 1949. Եվ գ. Բայբուրդյան, Հայաստանի գունազարդ կերամիկայի պրոբլեմը, ՀՍԽՀ Պատմության և գրականության ինստիտուտի «Տեղեկագիր», 1937, 2, էջ՝ 268—308։

[14] А. О. Мнацаканян, О двухцветной керамике Лчашена, „Изв. АН Арм. ССР, էջ 268—308։ Այս հոդվածում մեր տված ժամանակագրությունը նոր և հարուստ նյութերի հիման վրա ստորև վերանայում ենք։

ամենափոքրերը. միջին մեծության գավաթները երկու անգամ մեծ են, քան փոքրերը (աղ. IV, 5)։

Ստորոդ ենթախմբի մեջ մտնում են երկու կողմերից ներճկված՝ շրջանաձև քրեղաններ։ Մեծ մասամբ սրանց շուրթերը կտրտված են ուղիղ։ Երկու կողմից ներճկվածների հատակները ձվածիր են, իսկ մյուսներինը՝ շրջանաձև, բայց փոքր-ինչ ուռուցիկ։ Մի քանիսի հատակներին (գրսի կողմից) սև փայլաներկով պատկերված են խաչեր կամ վեց լայն գծերով ճառագայթներ։

Ջորոդ ենթախմբին են վերագրվում բավական մեծ խնամքով պատրաստված, երկու ծայրերից լայնացող սնամեջ այն իրերը, որոնք Լճաշենում ստացել են «Հրաբորբոք-բուրանոթ» պայմանական անունը։ Սրանք բավականաչափ տարածված են և հնագետների մոտ վազա[15] կամ պատվանդան[16] անունն են կրում։ Գ. Չայլդը դրանք կապում է կրակի հետ[17]։ Կուֆտինը դրանց նշանակության մասին որոշակի կարծիք չի հայտնում, Երվանդ Լալայանը համարում է խնկաման։ Որպես կանոն, սրանց վրա, կամ ռելեֆ-վերադիր ձևով, կամ կետերի միջոցով, ներկայացված են վարից-վեր սողացող օձերի պատկերներ, սև, փայլուն ֆոնի վրա մանր ու մեծ եռանկյունիներ, որոնց մակերեսները ծածկված են կետերով ու համատարած ներկված սպիտակ և կարմիր ներկերով, երկու դեպքում նաև մեանդրներով՝ դարձյալ կետերի և գույների միջոցով։ Սրանք 30—60 սմ բարձրություն ունեն և քիչ բացառությամբ հանդիպում են միայն զոհարանների հետ։

Հինգերորդ ենթախմբում կան մեծ թվով զոհարաններ։ Սրանք առաջին անգամ Անդրկովկասի պայմաններում հայտնաբերվել են Լճաշենում[19]։ Զոհարանները քառակող են, երկու ճակատներից փակ, իսկ երկու կողմերից դեմ առ դեմ պատուհանաձև անցքեր ունեն։ Պատուհանները լինում են երկուսից երեք տեղով՝ յուրաքանչյուր կողմում և միշտ հանդիպակաց։ Կան նաև եռանկյունաձև բազմաթիվ կտրվածքներով զոհարաններ, ըստ որում եռանկյունիները փոխարինում են մեծ պատուհաններին և դարձյալ գտնվում են երկու հանդիպակաց կողմերի վրա ու դեմ-դիմաց։ Կան օրինակներ, որոնք ճակատներից նույնպես ունեն եռանկյունաձև կտրվածքներ։ Մի քանի դեպքերում զոհարանների կողմերից որևէ մեկի կամ ճակատների վրա կետերով տրված օձերի պատկերներ կան։ Զոհարանների փակ կողմերը, ճակատները և ընդհանրապես կտրրվածքներից ազատ տարածությունները ծածկված են եռանկյունիներով, որոնք կազմված են կետերից ու մեջընդմեջ ծածկված են սպիտակ և կարմիր գույներով։

Լճաշենում հայտնաբերված եռագույն և նոր կերամիկան ներկայացված է խիստ բազմաթիվ նմուշներով, որոնք, առանց բացառության, ունեն սև փայլուն ֆոն, որի վրա ներկայացված են ձգված եռանկյունիներ, սեպաձև նախշեր, ժապավենաձև գծեր, մեանդրներ, սողունների և կենդանիների պատկերներ։ Այս բոլոր զարդանախշերը կատարված են գրեթե միևնույն ոճով (կետերով) ու

---

[15] Б. А. Куфтин, *նշվ. աշխ.*, *էջ 81—83*։

[16] *Նույն տեղում*, *էջ 66*, Табл. LIII.

[17] Гордон Чайлд, Древнейший Восток, М., 1956, *էջ 250, 273, 297*։

[18] *Ս. Լալայան, Նշվ. աշխ., էջ 151, նկ. 92, 93*։

[19] *Զոհարանի մի բեկոր, անզարդ, հայտնաբերված է Կարմիր-բլուրի քաղաքատեղիի պեղումների ժամանակ. տե՛ս* А. Мартиросян, Город Тейшебаини, Ереван, 1961, *էջ 45, նկ. 18։ Այլ նմուշներ մեզ հայտնի չեն։*

բոլոր պատկերները մեջընդմիջ ներկված են սպիտակ ու կարմիր՝ անանց, չխամրող դույներով, որոնց թարմությունը պահպանված է մինչև այժմ։ Սրանք, հավանաբար, պատրաստված են հատկապես թաղման հետ կապված ծիսակատարության համար։

Եռագույն կերամիկա պարունակող դամբարանների ուղղությունները, ծավալը և կառուցման ձևերը միատեսակ չեն։ Դամբարաններից մեծ մասը իր ձևվերով մոտենում է քարարկղներին, մյուսները նման են մեծ դամբանաբլուրներին։ Բոլորն էլ ունեն քարե պատեր (բայց ոչ միատեսակ ոճով պատրաստված) և ծածկված են եղել մեծ քարերով։ Ուշագրավ է, որ սրանցից մի քանիսի մեջ իսպառ բացակայում են մարդու ոսկորները, մինչդեռ կենդանիների ոսկորները լավ են պահպանված։ Եռագույն կերամիկա պարունակող դամբարաններից յուրաքանչյուրի մեջ կավամանների թիվը 10—60-ի է հասնում։

Դամբարանների այս խմբից առավել աչքի ընկնող և բնորոշ իրերով հարուստ են հետևյալ երեք դամբարանները։

Քարարկղ 100. տեղավորված էր արտերի մեջ, իր արտաքին նշանները նա գրեթե ամբողջությամբ կորցրել էր, գետնի երեսին երևում էր ծածկի քարերից միայն մեկի՝ 30 սմ դուրս ցցված ծայրը։ Պեղման ընթացքում պարզվեց, որ ծածկի քարերը թափվել են ներս՝ դամբանափոսի կեսից ավելին ավազով լցվելուց հետո։ Լրիվ բացելուց հետո նրա մեջ գտնվեց մեկ մարդու կմախք, ձախ կողքի վրա պառկած, թևերը և ոտքերը ծալած դրությամբ, գլուխը դեպի հյուսիս։ Բացվեցին երեք մանր և խոշոր եղջերավոր անասունների կողոսկրեր։ Մետաղե իրեր չեն հայտնաբերված։ Գտնված կավամանները գրեթե բոլորը մտնում են եռագույն կերամիկայի խմբի մեջ։ Գտնվեց երկու հրաբորբոք-բուրանոթ, երկու զոհարան և տարբեր չափերի ու նշանակության մեծ քանակությամբ կճուճներ, քրեղաններ, գավաթներ։ Հյուսիսային ճակատի պատի քարին սեղմված և իրար մեջ դրված էին երեք մեծ, տաշտականման փայտե աման և փայտե մեկ փոքրիկ դույլ՝ իր կափարիչով։

Քարարկղ 3. ծավալով ավելի փոքր էր, քան նախորդը։ Դամբարանը կողքերից ուներ չորսական շարք քարե պատեր, ուղղված էր հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք, կառուցված էր դագաղի տեսքով, լայնությունը մեկ կողմում՝ 1,6 մ, մյուս կողմում՝ 1,2 մ, երկարությունը՝ 2,1 մ, խորությունը ծածկի քարի տակից՝ 0,9 մ։ Մարդու կմախք չկար, բացվեց մեկ այծի և մեկ ոչխարի կմախք՝ մեկը մյուսի վրա դրված։ Դամբարանի հարավ-արևելյան կողքի պատին մոտ իրար վրա դրված էին 54 կավամաններ, բոլորն էլ փոքր ծավալի կճուճներ ու գավաթներ, որոնք ունեն ուժեղ սև փայլ ու զարդարված են սպիտակ և կարմիր ներկերով։ Զարդամոտիվը եռանկյունիներ են և մեանդրներ։

Դամբանաբլուր 3. —գտնվում էր առաջին տեղամասի դամբանադաշտի հյուսիս-արևմտյան ծայրում, պահպանված էր գետնի մակերեսից շուրջ մեկ մետր բարձրությամբ փոված բուրգը։ Պատերը և ծածկը պատրաստված են հսկայական ժայռաբեկորներից։ Ուղղությունը՝ արևելքից-արևմուտք, դամբանափոսի երկարությունը՝ 6,65 մ, լայնությունը՝ 2—2,5 մ, խորությունը ծածկի քարի տակից՝ 2,7 մ։ Դամբարանում բացվեց երկանիվ մեկ սայլ, որի առեղների երկարությունը 4, 5 մետրի է հասնում։ Առեղների առջևի կեսը փթել էր, անիվները, որոնց տրամագծերը հասնում են 1,45 մետրի, նույնպես փթել էին։ Սայլի թափքի տախտակները լրիվ քայքայված էին։ Լուծը չկար։ Սայլի կառուցվածքը խիստ ինքնատիպ է, նա ունի կամարաձև ծածկ, որը նման չէ Լճա-

շենից հայտնաբերված քառանիվ սայլերի կամարներին։ Սրա թափքի շրջանակի կողքերից յուրաքանչյուրի վրա յոթ տեղով ամրացված են բարակ փայտեր (ծառի անմշակ շիվ), որոնք անցնելով կողքերից զուգահեռ գնացող պահպանակների համապատասխան անցքերի միջով, ծայրերով միացվել են իրար և առաջացրել կամար։ Ամենայն հավանականությամբ սայլի կամարաձև ծածկը երեսապատված է եղել կամ կտորով (գործվածքով) կամ կաշիով, որոնց փթումից առաջացել էր սև ու բարակ մի խավ՝ խոնավ հողի մեջ։ Թափքի վրա բացվեց մեկ մարդու կմախք, նստած դրությամբ, որի տակ թափքի լայնքով դրված էր 18 սմ լայնությամբ և 3 սմ հաստություն ունեցող մեկ տախտակ։ Ննջեցյալը թաղման ժամանակ նստած է եղել տախտակին, ձեռքերը ծնոտին հենած։ Սայլի առեղների փթած մասի արանքում գտնվեց բրոնզե երկու սուր, նեղ ու երկար շեղբով (աղ. 1, 17), մեկ բրոնզե փոքր կացին՝ ետևի կողմից վեց ելուստներով (աղ. I, 16), որը նման է հեթիթական թեշուբ աստծո ձեռքին բռնած կացնին[20]։ Նույնանման հինգ ելուստներով կացին գտնված է Ելիզավետպոլի մոտ (Կիրովաբադի շրջան[21]), երրորդ, բայց ավելի երկար բնով կացինը գտնված է Գյանջա գետի մոտ, Նարիմանովի կողմից։

Սայլի առեղների ծայրում բացվեցին երկու սգների և երկու ձիերի գանգեր։ Ձիու գանգերից մեկի բերանում կար սկավառակաձև բրոնզե սանձ։ Դամբարանի պատերի երկարությամբ երկու կանոնավոր շարքերով շարված էին կավամաններ, որոնք մեծ մասամբ սև փայլով, երկու կողմերից ներճկված քրեղաններ էին։ Կավամանների խմբից ուշադրության արժանի է քառակող, ճակատներից փակ և մանր եռանկյունիներով զարդարուն զոհարանը, որի մեջ պահպանվել են խոշոր եղջերավոր անասունի կողոսկրեր։ Սրա տակ գրված էր մեկ հատ սև փայլով հրաբորբոք-բուրանոթ, որը խողովակաձև է, երկու ծայրից լայնացող, վերից-վար սողացող երկու օձերի վերադիր պատկերներով, որոնց գլուխները եռանկյունաձև են։

Լճաշենի դամբարաններից հայտնաբերված եռագույն խեցեղենի և բրոնզի իրերի կոմպլեքսի քննարկումից պարզվում է, որ այն սկիզբ է առել XVI դարի սկզբներից և անհետացել XIV դարի սկզբներին (մ. թ. ա.)։

Մեր ուսումնասիրությունից հետևում է, որ Լճաշենի վաղ շրջաններին վերաբերող նյութերը ընդգրկում են իրոք երկարատև մի ժամանակաշրջան և որոշ ընդհատումներով հանդերձ անցել են իրենց օրինաչափ զարգացման փուլերով։ Յուրաքանչյուր շրջանին պատկանող նյութերը արտացոլել են հասարակական կյանքում տեղի ունեցած տնտեսական, կուլտուրական և քաղաքական փոփոխությունները. այդ իսկ պատճառով հրապարակ են եկել արտադրանքի կամ մասամբ, կամ լիովին փոփոխված նոր նմուշներ՝ իրենց նոր տարբերակներով։ Հենց այդ նոր տարբերակներով հանդես եկած իրերի նոր կոմպլեքսներն են, որ չեն տեղավորվում ո չ նախորդ և ո՛չ էլ հաջորդ խմբերում։

* * *

Լճաշենի մշակույթը առաջացել է ավելի քան երկու հազարամյակում մեկը մյուսին հաջորդած սերունդների անընդմեջ նստակյաց կյանքի հետևանքով։

---

[20] Н. Д. Флиттнер, Культура и искусство Двуречья, Л.—М., 1958, էջ 266։
[21] А. А. Спицин, „Изв. Императорской комиссии", вып. 12, 1904, էջ 32, նկ. 14։

Այդ է ապացուցում այն հանգամանքը, որ այստեղի մշակույթի խմբում հստակորեն երևում են միևնույն վայրում առաջացած և իրար հաջորդած նյութերի կոմպլեքսները։ Իհարկե, մինչև Լճաշենի պեղումները Հայաստանում հայտնաբերված բրոնզի դարաշրջանին պատկանող արժեքավոր նյութեր նույնպես շատ ունեինք, ինչպես, օրինակ, Կիրովականի հռչակավոր դամբանաբլուրից, Ցամարաբերդից, Նոր Բայազետի (Կամո) նախկին գավառից, Դերեգ գետի ձորից, Ութեկին-լաղերից և այլ վայրերից, բայց դրանք իրենցից ներկայացնում էին մի որոշակի կարճատև ժամանակաշրջանի մշակույթ, ուստի և չէին կարող բացահայտել միևնույն վայրի նյութական մշակույթի մի քանի հազարամյակների հաջորդական զարգացման պատկերը։ Լճաշենի պեղումներով վերացվեց այդ բացը և թերևս այդ է պատճառներից մեկը, որ մինչև օրս էլ Լճաշենի մշակույթը մնում է անդերազանցելի։

Լճաշենի մշակույթը իր պատմական զարգացման ոլորտում բազմակողմանի և ամուր թելերով կապված է եղել Հայաստանի հնագույն մշակույթների հետ և աստիճանական զարգացման հետևանքով հասել է նոր բարձունքի. հայտնի է, որ մեր երկիրը հարուստ է հին և նոր քարի դարի, պղնձի և բրոնզի դարաշրջանների և երկաթի դարի մշակույթի հազարավոր հուշարձաններով։ Լճաշենի պեղածո ամբողջ նյութը, հանդիսանալով Հայաստանի նախորդ մշակույթների օրինական շարունակությունը, միաժամանակ պարզորոշ ցույց է տալիս իր հաջորդական զարգացման և օրինաչափ անցումների փուլերը։ Լճաշենի նյութական մշակույթը նշանավորում է մշակույթի զարգացման մի ավելի բարձր աստիճան՝ սկսած էնեոլիթից մինչև երկաթի տարածման շրջանը։ Դա տնտեսական ու կուլտուրական վերելքի մի շրջան էր, երբ հասարակական հարաբերությունների մեջ նույնպես որոշակի բեկում էր առաջացել։ Տեղի էր ունենում որոշակի սոցիալական շերտավորում. ինչպես տեսանք, արդեն կային ստրուկներ, ունեցվածքը կենտրոնացվել էր ազդեցիկ մարդկանց և ցեղերի առաջնորդների ձեռքերում։

Լճաշենի նյութական մշակույթի վերելքի շրջանում (XV—XIII դդ. մ. թ. ա.) Սևանի ավազանը հանդիսանում էր բազմահավաք ցեղերի բնօրրան, բայց հավանաբար նրանց մշակույթի, կենցաղի, սովորույթների միջև եղած տարբերությունները մեծ չէին։ Այդ երևում է նշված դարերին պատկանող հնագիտական նյութերի գրեթե միատեսակությունից։ Դա նշանակում է, որ Լճաշենի մշակույթի վերելքի շրջանում ավազանի տեղաբնիկ ցեղերի միջև արդեն ստեղծվել էր մի միասնություն։ Անհավանական չէ, որ կարող էին լինել նաև արենակից ցեղերի ավելի խոշոր մի քանի միավորումներ, որոնց միջև գուցե առկա էին միաձուլման պոտենցիալ հնարավորություններ։ Թերևս այդ այն շրջանն էր, երբ նաև Սևանի ավազանում սաղմնավորվում էր վաղ շրջանի հին արևելյան տիպի պետականություն։ Լճաշենի բազմակողմանի և բարձր զարգացման նյութական մշակույթը զուտ տեղական բնույթի մշակույթ չէ. այն երևան է բերում բազմաթիվ ցեղերի միասնական կուլտուրայի համար բնորոշ ընդհանուր գծեր և սինթեզում է իրար հաջորդած կուլտուրաների նվաճումները, մի երևույթ, որը հնարավոր էր միայն զարգացման ավելի բարձր մակարդակի հասած և արդեն համախմբված ցեղային հզոր խմբակցությունների և ոչ թե ինքնուրույն և ինքնամփոփ վիճակում ապրող մեկ առանձին ցեղի մոտ։


№3 М. 1:1
№4 М 1:1
№2 М 1:1
№6 М 1:1
№7
№5 М. 1:1
№1 М 1:2
72 М 1:1
8
9
10
11
№13 М. 1:2
№14 М 1:1
№15 М 1:1
№16
№17 М 1:4

Աղյուսակ I.



Աղյուսակ II



Աղյուսակ III.

Աղյուսակ IV.

ОСНОВНЫЕ ЭТАПЫ РАЗВИТИЯ МАТЕРИАЛЬНОЙ КУЛЬТУРЫ ЛЧАШЕНА

А. О. МНАЦАКАНЯН

(Р е з ю м е)

В статье классифицируется и датируется материал, раскопанный экспедицией под руководством автора в 1956—1963 гг. на территории циклопической крепости Лчашен, а также погребений, освободившихся в этом районе из-под вод оз. Севан.

Раскопанная культура охватывает период с середины III тыс. до VII в. до н. э. и представлена многочисленными новыми материалами, не имеющими аналогий (жертвенники, трехцветная керамика, повозки новой конструкции, виды захоронений, доселе неизвестные в Армении).

Основой для хронологических рамок раскопанных материалов служат хорошо прослеживаемая стратиграфия крепости и погребений, а также аналогии к ним. Впервые публикуемый в статье новый материал, относящийся к промежуточным звеньям между энеолитом и древней бронзой, датируется XXIII—XXI вв. до н. э. Следующий этап развития лчашенской культуры охватывает XXI—XIX вв. до н. э. Многочисленный и богатый материал, охватывающий XX—XVI вв. до н. э., делится на три этапа развития. Последняя группа предметов — трехцветная керамика, впервые встреченная в Лчашене и не имеющая аналогий,— датируется XVI—XIV вв. до н. э.

Можно предполагать, что племена Севанского бассейна, в особенности в период расцвета лчашенской материальной культуры (XV—XIII вв. до н. э.), имели почти единую культуру и стояли на пути консолидации. У них существовало определенное социальное расслоение. Культура этого этапа несомненно принадлежала аборигенам, которые вели непрерывную оседлую жизнь в течение многих веков.